

Orer

ORER 1DNY - Arménsko-europský nezávislý časopis
Armenian European Magazine Եվրոպական ամերիկայի ամսագիր



Բացառիկ հարցազրոյց
ՎԱՐՉԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ
ԶԵԽԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԶԵԽԻԱՅԻ
ԱՆՆԱԿԱԴԵՊ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Օգնենք իրվանդ երեխաներին



«Մարին Ալե և ընկերներ»

Գլխավոր դատախազմները
Դրահայուն



Ունատա
Վիսեղլա
և Աղվան Հովսեփյան

Սովորենք հայերեն
վիրտուալ բոյցում



Երվանդ Չորյան



- Արդեն մոտ մեկ տարի է, գործում է ՀԲԸՄ վիրտուուլ բոլեջը, որն օն-լայն ուսուցանում է արեւելահայերեն եւ արեւմտահայերեն, հայ ժողորիք պատմություն եւ մշակոյթ: Անցած մեկ տարվա ընթացքում որո՞նք են բոլեջի տված առաջին արդյունքները, ի՞նչ զնահատական կտայիք, ի՞նչը որոշեցիք ավելի կատարելագործել ուսուցման պրոցեսում:

-Մեկ տարին բավականին արագ անցավ: Մենք ուսումնական տարին բաժանել ենք չորս շրջանների՝ ամառային, աշնանային, ձմեռային եւ գարնանային: Մեզ համար բավական հետաքրքիր էր մի կողմից մասնակիցների թիվը, խանդավառությունը, մյուս կողմից նկատեցինք որոշ պետքեր, ընդլայնման եւ հավելման իմաստով: Մասնակիցների թիվը հասել է ինքն հարյուրի, որոնք եկան մեկ կամ ավելի դասընթացների, 35 երկրից, երկրներ, որտեղ նոյնիսկ կազմակերպություններ չենք ունեցել, եւ հետաքրքրական էին նաև այդ մասնակիցների պատճառները:

Ունանք իրենց հայ ինքնությանն են ցանկանում վերադառնալ, խկ ունանք էլ, որ հայ չեն, բայց կապեր ունեն հայկական ընտանիքի, հայության հետ: Կային նաև, որ Հայաստանի հետ որեւէ գործ են սկսել, եւ ուզում են հայոց լեզվին ու մշակույթին ծանոր լինել: Կային անձինք, որոնք պատրաստվում էին ՀՀ հյուպատոսություններում աշխատել կամ օտար դիվանագետների կանայք էին: Իրենց համար ննան ծրագրը շատ հարմար է, քանի որ որևէ տեղ գնալու կարիք չունեն: Դպրոցն է զայս իրենց տուն: Այսպիսով ունեցանք հայ եւ ոչ հայ ուսանողներ: Երկրորդ տարիին տարերությունն էր: Ունենք 17 տարեկանից մինչեւ 82 տարեկան սովորողներ: Նրանց 2/3-ը 40-ից ցածր էին, 1/3-ը՝ բարձր:

-Դա նշանակում է, որ տարիքային սահմանափակում չկա՞:

-Այո, միակ կարեւոր պայմանը տեխնիկայից օգտվելու կարողությունն է: Անձը պետք է համակարգչային ծրագրերից օգտվել իմանան:

-Ի՞նչ տեխնիկական կարողություն պետք է ունենա ծրագրերից օգտվելու համար:

-Դպրոցի հետ կապվելը ինտերնետի առկայություն է, պահանջում: Եվ պետք է դանդաղ ծայնային կապ չլինի, այլ արագ՝ որպեսզի բոլոր նկարներն ու պատկերային շարժումներն արագ տեսամելի լինեն:

Մայիսի 23-ին Պրահայում տեղի ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միուրյան Վիրտուուլ բոլեջի տնօրեն Երվանդ

Չորյանի համդիպումը Պրահայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Պարոն Զորյանը ներկաներին ծանոթացրեց Վիրտուուլ բոլեջի գրեթե մեկ տարվա աշխատանքներին, այդ ծրագրերին չեխահայության մասնակցության հնարավորություններին, ինչպես նաև պատասխանեց ներկաներին հետաքրքրող հարցերին:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ավելի ակտիվ համագործակցել ՀԲԸՄ կրթական ծրագրերի շրջանակում: Հանդիպումից առաջ պարոն Զորյանը պատասխանեց նաև մեր ամսագրի հարցերին:

-Սկայֆի կարիք կա՞:

-Ոչ սկայֆի, բայց դրա նման մի այլ «ստրվեր» ունենք, որ ընդգրկել ենք այս ծրագրի մեջ: Ուսուցիչների հետ կամ ֆորումի մեջ քննարկումների համար անհրաժեշտ:

-Այսինքն տալի՞ս եք այդ ծրագրային փարերը:

-Դա ինտերնետի վրա է դրված: Սովորողը բացում է համապատասխան էջը եւ աշխատում դրա վրա:

Հաջորդ հարցը կապված է ուսուցման ժամերի հետ: Ժամը թելադրում է բոլմ՞ջը, թե սովորողն ինքն է ընտրում իր ուսուցման ժամը:

-Դասերն ուսուցիչը չի սովորեցնում օն-լայն ուժիմով, այլ արդեն ձայնագրված են տեսատր, պատկերը, եւ դր միացնում են ու լուս ես մուլտիմեդիա ուժիմով: Ամեն շաբաթվա երկուշարքի օրը ոնք դրա է բացվում մեր կայքէջում, եւ մինչեւ մյուս երկուշարքի պիտք է ամբողջացնեա, սովորես այդ դասը: Բայց նաև շաբաթվա ընթացքում որոշ պարտականություններ ունեն: Ասենք թե, չորեքշարքի ուսուցիչի հետ կապվելու ժամ ունեն, որը համապատասխանում է ք երկրի ժամանակային գտուն, կարող ես օն-լայն ուժիմով միանալ Երեւանում նստած քո ուսուցչին: Ասենք Արգենտինայից մեկն իսպաներենով սովորում է հայոց պատմություն, եւ ուսուցիչների հետ քննարկում է իրեն հետաքրքրող հարցերը: Ակայֆի պես մի ծրագրով կարող է իրեն հետ բանակցել, հարցեր տալ, քննարկել այն լեզվով, որով սովորում է: Դրանից զատ, կան փորումներ, որոնց պետք է պարտադիր մասնակցել՝ տվյալ դասարանի մյուս 12 սովորողների հետ: Այսպիսով ուսուցումը տարբիւմ է թե՛ գրավոր, եւ թե՛ բանավոր, ինչպես նաև դասընկերների հետ օնլայն շփումներով: Սովորողներն ազատ են իրենց իրենց դասը որեւէ ժամին սովորելու:

-Այս մեկ տարին ի՞նչ որակ ցույց տվեց: Օրինակ, դիմորդները քանի՞ կիսամյակի ընթացքում կսովորեն հայոց լեզվում:

-Լեզվի ուսուցման համար ունենք ուր դասընթաց: Ամեն մի դասընթացը մեկ եռամսյակ է տեսում: Այսինքն, եթե առանց դադարի սովորես, ապա երկու տարբում այդ կուրսը կավարտես:

-Ինչպես է վճարումը կատարվում, եւ ի՞նչ արժե մեկ ուսումնական կուրսը:

ՍՈՎՈՐԵՔ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՍՏԿԱՐԳՉԻ ՕԳՆՈՒԹՅԱՄ

**Երվանդ Զորյանը
Ակրկայացնում է**

**Վիրաբույզ քոլեջի առաջին
դպրությունը ները**

ՀԱՅԱՊՐԵԺԱՅԻ, ՊՐԱԽԱ

-Մենք չուզեցինք դպրոցն անվճար անել, քանի որ երբ որեւէ քան ձրի ես անում, արժեք չի ունենում: Պետք է վճարում կատարվի, որ իմ՝ որ կերպ այդ անձը կապված լինի դպրոցի հետ: Այլ դպրոցների նման մեծ զմեր չենք դրել: ՀՔԸՄ-ն ինքնի է հոգում դպրոցի բոլոր ծախսերը: Գումարը սիմվոլիկ է: Մեկ կիսամյակի գինը 199 դոլար է: Եթե որեւէ անձ դիմի եւ ասի, որ իր վիճակը շատ ծանր է, ապա այդ ծախսը կիսակենք Բարեգործականի կրթարոշակալվ, կամ կիսով չափ կամ քառորդ մասով: Նպատակը շատ հետապնդել է: Բոլորովին անվճար անելու պետք չունենք, քանի որ շատ օտարներ էլ են մասնակցում: Եթե ՀՔԸՄ անդամ ես, 1/3-ի գելզ ունեմ: Եթե կուրսը բարձր նիշով վերջացնեմ, քո գումարը ենա կտտանա: Եվ բավական մեծ թվով մասնակիցներ ունենք, որ ուսումնական կուրսի վերջում հետ են աստանում իրենց գումարները: Դեռևս այդպիսի դեսպր չենք ունեցել, որ վճարման պատճառով չմասնակցեն դասերին: Նա, ով պետք ունի ուսանելու կտտանա այդ ուսումը:

-Կարելի՞ է ասել, որ այս առաջին տարվա ծրագիրը հաջողվել է ենոր տարրերով պետք է շարունակվի:

-Այո, մենք երբ սկսեցինք, նոր էինք պատրաստում բոլոր ծրագրերը: Այժմ լեզվի ուսուցման չորս կուրսն արդեն պատրաստ ունենք: Աշխատանքները շարունակվում են նաև մյուս կուրսերի ուղղությամբ, որը իրականացնում են Երեւանի պետական համալսարանի լեզվաբանության և համակարգչային տեխնիկական բաժինների աշխատակիցները: Հայ ժողովրդի պատմությունը պատրաստվում է պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի գլխավորությամբ: Բուն նյութի պատրաստելուց զատ, ամեն մի դասընթաց կարող են վեց լեզուներով սովորել՝ արեւմտահայերեն, արեւելահայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և խալաներեն: Օրինակ, կարող են ասել, որ միջնադարյան հայոց հայ ժողովրդի պատմության դասերին կարող են հետևել ուսուերենով: Մեկ կուրսը շաբաթական չորսից վեց ժամ: Ամեն մի եռամսյակում ինն ակտիվ շաբաթվական կարիք կա, որից հետո երկու շաբաթ հանդիսան ունեն:

-Վկարտական ի՞նչ վկայական են ստանում սովորողները, են որտե՞ղ կարող են դա օգտագործել:

-Երբեմ ՀՔԸՄ բարեգործականի դպրոց ստանում են վկայագիր, որ այդ կուրսը ավարտել են: Դրանից զատ հիմա համալսա-



րանների հետ աշխատանք ենք տանում համաձայնագրերի շորք: Մի քանի ճյուղերով ենք աշխատում այդ ուղղությամբ: Հայաստանում աշխատում ենք, որպեսզի գիտության և կրթության նախարարության կողմից այս դպրոցի դասընթացներն ստանան ճանաչում: Արդեն խև վավերացվել են ԵՊՀ-ի և Գիտությունների Ազգային ակադեմիայի կողմից, ստացել ենք մեր դասընթացների համալսարանական մակարդակը հավաստող հավաստագիր: Փարիզում գործող ԻՆԱԼԿՈ համալսարանը՝ օտար եւ արեւելյան լեզուների նույնական արդեն ճանաչել է, որ մեր մենք դասընթացը կիամապատասխանի եվրոպական ուսումնական երկու քրենիտին: Եթե եվրոպական որեւէ համալսարանում ուսանում են, ապա կարող են այդ երկու քրենիտը օգտագործել: Նոյն աշխատանքը հիմա տանում ենք նաև Ամերիկայում: Ունենք նաև մարդիկ, ոք քրենիտի կարիք չունեն, քննություն չեն ուզում հանձնել այդ դեպքում գրանցվում են որպես ունկնդիր: Սեր ուսանողների 1/3-ը ունկնդիրներ են, ովքեր նիշի կամ քրենիտի համար չեն սովորում: Նրանք ուսուցչի հետ կապվում են, մասնակցում են ֆորումներին, քայլ վերջում քննություն չեն հանձնում:

-Դիմորդների ո՞ր տոկոսն է Ամերիկայից կամ Եվրոպայից:

-Ամենամեծ շերտը ԱՄՆ-ից է, հետո Ռուսաստանից, հետո Ֆրանսիա և Արգենտինա: Բնականարար, ամեն մեկն իր լեզուներով՝ անզերենով, ուսուերենով, ֆրանսերենով եւ խոպաներենով: Ունենք նաև ուսանողներ Վենեսուելայից, Աֆրիկայից, Էստոնիայից, Չինաստանից, ովքեր իրմանականում հայեր են: Դիմորդներն առաջին շաբաթվա ընթացքում կապվում են եւ միմյանց հետ են ծանոթանում, ասում են, թե ինչու են որոշել հայերեն սովորել: Մի ճապոնուիկ դիմել եր, որովհետեւ իր հայ ամուսինը Արմենը երեխաների հետ հայերեն է խոսում, եւ ինքը նոյնական ուզում էր հայերեն սովորել: Շատերն ամուսնության պատճառով են ուզում: Նաև դպրոցի միջոցով իրար հետ են ծանոթանում եւ կապեր են ստեղծվում շատ հայերի միջեւ:

Տեղեկանք. Երվանդ Զորյանը նոր գլեխնոգիաների հայրն է մասնագիր է, ԱՄՆ «Վիրած Լոջիք» ընկերության վորանախազահին է և զինավոր գիտնականը, համագործակցում է հայաստանական մասնաշուղի հետ, որը Ամերիկայից դուրս ամենամեծ կնայրունն է 125 աշխատակցով: